թեան կատարելապէս համաձայն է նաև մեր Ս. Ներսէս Շնորհալի հայրապետն ալ, երբ իր Այսօր անձառ երգին մէջ կը գրէ.

«Ծառայն զերեսն այն ապտակէր
յորմէ Սրովբէն թեւասքօղէր.»։

3. Ա. Ձիրենին.

Որո՞նք են այն աւանդական յիշատակները, որ երկնային զօրութեանց պատուոյն յաւերժացման տենչանքին հետ մեծապէս ազդեցին բարեպաշտներու՝ որպէս զի սրբագործեն եկեղեցիով և վանքով Փրկչին առաջին Զարչարանաց և բանտարկութեան տեղը, որ է Անանայի տունը. — երեք են անոնք. Ձիրենին, Բանտը և Ովասանայի քարը։

Գեղեցիկ և սրտառուչ զրոյցներ հիւսուած են նոյն ձիթենիին մասին. նուիրական ծառ մը դարձած է ան եւ կը մնայ մինչեւ ցայսօր. դարէ դար հին արմատէն բողբոջած են նոր ճիւղեր որ կը հովանաւորեն եկեղեցիին հիւսիսային կողմի անկիւնը՝ շրջապատի մը մէջ. բարեպաշտ ուխտաւորներ կ'այցելեն միշտ անոր, եւ բարեպաշտութեան առարկայ ալ կ'ընեն զայն։ Պատմական հանգամանքէ ալ զուրկ չէ ան։ Երուսաղէմի Եղիազար պատրիարքը, որ իր պաշտօնին ամենայն Հայոց Հայրապետութիւնը միացնելու յանդուգն ձեռնարկն ալ ըրած է, 1666 ին Ս. Ծնընդեան տօնին օրը, Ս. Յակոբի տաճարին մէջ միւռոնօրհնութիւն կը կատարէ նոյն ձիթենիին քամուած իւղով. և նոյն միւռոնէն կը բաշխէ եկեղեցիներուն, և Հռովմայ Պապին ալ կը ղրկէ նոյն միւռոնէն Լատինաց խնդրանքին համաձայն։ Սոյն միւռոնօրհնութեան արարողութիւնն ալ մասնաւոր կոնդակով մը կ'իմացնէ նոյն տարւոյն Յունուար 23 ին Պոլսի Հայոց, եւ կը յիշէ վերեւ յիշուած պարագան (Տե՛ս Հանանոս Պատմութիւն Երուսաղէմի եւն. Խորէն վրդ. Մխիթարեանի, էջ 103–106։) Երուսաղէմացի Հաննէ վրդ. իր Պատմութեան մէջ (էջ 242) հետաքրքրական տեղեկութիւններ կու տայ և կը յայտնէ թէ ինքը լսած է հրաշախառն զրոյցներու պատմութիւններ այս ծառին նկատմամբ. այնպէս որ՝ անոր պտուղին կուրը դեղթափի նման, ծննդական կանանց, ջերմոտներու և աչցաւ ունեցողներուն բժշկութիւններ տուած է. օտարներ ևս շատ յարգ կ'ընծայեն այս Ձիթենիին։